Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Կամպիօն

823

Կաւկաւկան լեգէնդա

865
Կ-18

Թիֆլիս
1890

284

8-93
4-28

ԲԱՍԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

865
4-18

17.7.2003

6138

Հրատարակութիւն „Աղբիւր“ եւ „Տարազ“ պատ. հանդէսների № 26

865
4-18
ար

ԱՐՏԻՒՐՕ ԿԱՄՊԻՕՆ

ԲԱՍԿԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԱ

„Աղբիւրից“ արտատպած

4865

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
R.S.F.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
имени Лясникова
Ա. ՍՍԱՆԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
ԴոլոմԱՌ. պր. Եւ ԲարեւտիՌ. փող. տՌՆԿԱՌ:
1890

Дозволено цензурою, Тифлисъ, 1890 г. 6-го сентября

Тип. „Арор" Т. Я. Назарьянъ. угол. Головин. пр. и Барят. ул.

Գիշեր էր։ Մի քանի ժամ սրանից առաջ, երբ դեռ արեգակը փայլում էր հորիզոնի վրայ, Էսկալ-Էւլեայում տեղի ունեցաւ մի դէպք, որ զրկում էր բասկերին պատւից ու բախտից։ Պատշգամբի վրայ կռթնած, ես նայում էի հեռուն։ Աչքերիցս առատ հոսում էր արտասուքը. իսկ սիրտս սաստիկ ցաւի և սրտնեղութեան ազդեցութեան տակ միայն հառաչանքներով ու յոգոցներով էր արտայայտում իր բարկութիւնը։ Մաքուր, կապոյտ երկնակամարի վրայ վսեմաբար բարձրանում է փառահեղ լուսինը և հրաշալի աստղերը, իսկ իմ հայրենիքը, իմ թանգագին սիրուն Էսկալ-Էւլեան տքնում էր տանջանքների, հարստահարութեան և ամօթի մէջ։

—Աւաղ, ասում էի ինքս ինձ, բոլորը կորաւ հիմա. բասկերի լեռների վրայ այժմ յաւիտեան կըլսուի տամբուրինի ձայնը, հովւի երգը, բասկ աղջկանց դափը և դարբնոցների դղրդիւնը։ Նրանց տեղ հիմա կըլսուի մայրերի լացն ու հառաչանք, որոնցից տարէցտարի պիտի լսեն նրանց որդիներին։ Աստուած իմ, ինչպէս ազատենք այդպիսի խայտառակութիւնից։

—Մի վախիր, գնանք միասին։ Ես հին ժամանակների հրեշտակն եմ։ Ես կը սովրեցնեմ քեզ, թէ ինչպէս էին վարւում

քո նախնիքը, երբ հայրենիքին մի վտանգանք էր սպառնում, ինչ դերք էին բռնում նրանք վտանգաւոր վճռողական րոպէներին։ Յանկանում ես ինձ հետևիլ։

Ես պատասխանեցի՝ այո։ Հրեշտակը վերցրեց ինձ իր կռնեբի վրայ, ինչպէս մայրը գրկում է իր զաւակին, ու բաց անելով իր սպիտակ թեւերը, բարձրացաւ դէպի անսահման կապոյտ տարածութիւն։

Երբ որ մայր մտնող արեգակի ճառագայթներն սկսում են ոսկի գոյնով ներկել լեռների գագաթները, արտուտիկը լոյս վնտրելով, թողնում է մութ կանաչը, երկինք է թռչում։ Մենք էլ էինք բարձրանում, բայց աւելի արագ քան արտուտիկը. շտապում էինք իմանալ անցած դարերի գաղտնիքը. ես երբէք չեմ մոռանալ այն պատկերները, որոնք րոպէապէս փայլում էին աչքերիս առաջ, երբ հրեշտակը սրընթաց բարձրացնում էր ինձ երկինք։ Գլխիս վերեւ փռուած էր աստղափայլ երկնակամարը՝ ամենակարող Աստուծոյ ամենահրաշալի ստեղծագործութիւն, ցածրում երեւում էր երկիրը, մարդկային բանտը—այդ տխուր արտասուքով ջրած մշտական փառքի Ճանապարհը։ Այս կողմում արծաթափայլ գետը, այն կողմում լեռների գագաթներ քիչ հեռուն—մերկ և անպտուղ ժայռերը, եղեւնիներից բաղկացած անտառներ, փրփրուն գետակները, մութ հովիտներ, իսկ այնտեղ՝ հեռուն՝ անսահման անհանգիստ և ալէծուփ ծովը։

Հինգ ժամից աւելի այսպէս թռչելուց յետոյ ամպերից վեր եկանք գետնի վրայ։ Երկիրը պատած էր թանձր մառախուղով։ Նուրբ և հրաշալի ձայնը շշնջաց ինձ. „Ուրախ եղիր, մենք Իսկալ—Էռիայումն ենք։

Հրեշտակը ձեռքերը երկինք բարձրացնելով բացագանչեց.

—Զարթեցէք, մեռած Իսկալ-Էռիացիներ, բարձրացէք, դուրս եկէք ձեր գերեզմաններից։

Այս խօսքերից յետոյ մառախուղն իսկոյն անհետացաւ և աչքերիս առաջ բացւեց լեռներով և անտառներով պատած մի հովիտ։ Մարդկանց մի ամբոխ խմբւած էր մի հաստ, բաղմաճիւղ կաղնու շուրջը. այստեղ կային և աղամարդիկ, և կանայք, դեռահասներ և երեխաներ, որոնք շորերի վրայ հագած ունէին վայրի կենդանիների մորթի։ Տղամարդկանց սև հագուստի վրայ զէնք էր փայլում. նրանց երկար մազերը փռւած էին ուսերի վրայ, իսկ ոտներին հագած ունէին փայտէ ոտնամաններ, ինչպիսիները սովորաբար հագնում են լեռնարնակ բասկերը։ Կանայքը բոլորն էլ սպիտակ էին հագնուած, արձակ մազերով ու ոտաբոբիկ։

Ստւերում կաղնու հաստ ճիւղերի վրայ նստած էր մի ծերունի. նրա հագուստը, գաւազանը և ոտնամանները պարզ ցոյց էին տալիս, որ նա հովիւ էր, սակայն նրա խոր և խելացի հայեացքը վկայում էր նրա իմաստութեան մեծութիւնը։ Ծերունու առաջ՝ մի խումբ պահապաններով պատած՝ կանգնած էր մի հռօմէական զինւոր։ Հռօմայեցոց զէնքը ոսկուց էր, նրանց տէգերի ծայրերը աստղերի պէս փայլում էին։ Նրանք, բոլորն էլ, իրանց զէնքերով և թանգագին շորերով թագաւոր էին երևում բասկերի հետ համեմատելով։

Ծերունին և զինւորը երկար խօսում էին լատին լեզուով։ Վերջապէս օտարականը հանեց մի մագաղաթ, և ասելով՝ ահա ինչ է պահանջում տիեզերքի իշխանը, կարդաց.„ Օկտաւիոս Օգոստոս, իշխան տիեզերքի և Հռօմի կայսրը ողջունում է Թուլին

Տոմայօին, Աւուակիլին, Լեկարբիդին, Զաւին և միւս առաջնորդներին և աւագներին։ Ժամը հասաւ յաւիտեան փակելու Յանոսի տաճարի դռները։ Աստուածները ցանկանում են, որ տիեզերքի բոլոր ազգերը ապրեն սրբազան կայսրների իշխանութեան տակ։ Ասիան, Աֆրիկան և Եւրոպան հպատակեցին հռոմէական իշխանութեան. միմիայն մի ազգ, հեռու Սպանայում, չի հնազանդում և չի վճարում ինձ՝ ամենակարող կայսրիս պարտաւորուած հարկը։ Ես ծնուած եմ աստուածների կամքը կատարելու համար. այս պատճառով Կանդաբրիայի ափերքին ես խմբեցի մի անհագին զօրք հետևակներից և հեծելազօրքերից բաղկացած։ Բայց իմ մեծահոգութիւնը աշխարհքին ցոյց տալու համար, ես նախ քան պատերազմ սկսելս, ձիթենու ճիւղ եմ ուղարկում ձեզ։

„Իմ դեսպանը՝ իմաստուն Լուցիուս-Սերգիուսը՝ կըյայտնի ձեզ, թէ ինչ միջոցով կարող կը լինիք ստանալ Հռոմի բարեկամութիւնը։ Ես ձեզ հաշտութիւն եմ առաջարկում, բասկեր, ընդունեցէք ուրախութեամբ։ Հակառակ դէպքում՝ ամբողջ Իսկալ-Իուխան կը լցուի պատերազմի թշուառութիւններով—այն է մահով և կործանումով։

„Կապիտոլիայի Իւպիտերը թող պահպանի ձեր կեանքը.
—Փօրտուս—Վիկտորիա, եղայք Մարսի. մեր իշխանութեան ութերորդ տարին։ Կայսր-Օգոստոս իմպերատոր.“

—Ի՞նչպէս համարձակեցար դու, Իւչին-Տօմայօ, հաւաքել մեզ այստեղ այդ յանդուգն գրութիւնը լսելու։ Որո՛տ և կայծա՛կ։ Աշխարհի սկզբից մինչև այժմ իմ ծնողքս և նախնիքս ապրել են, ոչ մէկի լուծը չընդունելով, ես էլ ցանկանում եմ ազատ մնանել։

—Այո, այո, Բէհէն-Աւուակիլ, մենք բոլորս, ինչպէս և դու, կամենում ենք ապրել և մեռնիլ ազատ, առանց ոչ մէկի լուծի, աղաղակում էին բոլոր ներկայ եղողները։

Իւչին Տօմայօն աջ ձեռքով նշան անելով, ասաց.

—Լսեցէք, եղբայրներ, շատ մասը դուք դեռ չէք իմացել . . . Մի՞թէ դուք կարծում էք, թէ ես Իսկալ-Իուխայի հայրենասէր որդին չեմ . . .

—Ոչ, ոչ, ներիր մեզ, խօսիր։

—Ես երկար խօսեցի հռօմէացոց դեսպանի հետ, և ահա թէ նա ինչ ասաց. բասկերը պէտք է ուղարկեն կայսրին տարեկան ութ հարիւր առողջ և ուժեղ երիտասարդներ և երկու հարիւր գեղեցիկ, մատաղահաս աղջիկներ։ Որովհետև մեր երիտասարդները գեղեցիկ են և ուժեղ, նրանք միշտ կայսրին պիտի ծառայեն, իսկ մեր աղջիկները կըլինին կայսրուհու աղախինները։ Այլ խօսքով. առաջինները պիտի պահպանեն տիեզերքի իշխանի թանգագին կեանքը, իսկ միւսները, ծառայելով կայսերական պալատում, պիտի վայելեն, ինչպէս ասում են հռօմայեցիք, ամենամեծ փառքը աշխարհիս երեսին։ Բասկեր, մի՞թէ դուք ուրախ չէք այս մեծ ողորմութեանը։

Ամբոխի մէջ բարձրացաւ անասելի տրտունջ և անբաւականութիւն. լսւեցին աղաղակներ, անէծք, և սուլոց. . . Երբ ամբոխը քիչ հանդարտեց, Իւչին-Տօմայօն շարունակեց.

—Լսեցէք, խնդրեմ, մինչև վերջը, ինչ որ ասաց ինձ հռօմայեցին։ Բացի այս, մենք պէտք է վճարենք կայսրին տարեկան տասն հազար գինար, հինգ հարիւր եզը, երկու հազար ոչխար, չորս հարիւր կով, ութ հարիւր խոզ և . . .

—Եւ լուսի՞նը թէ՞ արեգակը, բարկացած հարցնում է Բէհէն-Առակլը։

—Նա պահանջում է, եղբայր, աւելի շատ, անհամեմատ աւելի շատ։ Նա պահանջում է, որ մենք մեր ամենից յարգուած սրբազան ծառը, որի տակ վճռում ենք մեր գործերը և միանգամից յաւիտեան հրաժարուելով մեր իրաւունքներից, հպատակենք հռոմայեցոց օրէնքներին.

—Ինչո՞ւ այդ անարդար մարդը չի պահաջում, որ մենք նրա համար դուրս քաշենք մեր սրտերը կրծքերից ու աղիքներս փորներից, հարցնում է Լէկարիդին։

—Դո՛ւրս այստեղից, հռոմայեցի, դո՛ւրս, թնդում է ամբոխը։

—Դուք մինչև հիմա, շարունակում է Իւշին-Տոմայօն, լսեցէք առևծի մռնչիւնը, այժմ նորան կը փոխարինէ աղուէսի խաբէութիւնը և յետոյ գայլի ոռնոցը։ Դեսպանը հաւատացնում է, թէ հռոմայեցոց իշխանութիւնը ընդունելով, մենք աւելի երջանիկ կը լինինք։ Հիմա վայրենի վագրերի նման մենք ապրում ենք լեռներում, իսկ այն ժամանակ մենք կապրենք քաղաքներում և ամեն բան կունենանք. այսօր մենք ծածկում ենք մեր մարմինը վայրի կենդանիների մորթիներով, իսկ վաղը մենք կը զուգւինք կերպաս պերճ հագուստներով. այսօր մենք ապրում ենք խուղերում, վաղը կը տեղափոխւինք փառաւոր պալատներ. այսօր մենք տգէտ ենք, վաղը իմաստուն կը դառնանք։ Մտնենք, ուրեմն ոսկէ վանդակի մէջ։ Հակառակ դէպքում Կայսր-Օգոստոսը կըգայ իր անթիւ զօրքի հետ, տակնուվրայ կանէ ամբողջ Էսկալ-Էռիան, կը սպանի կանանցը և մարդկանցը, կը ծախի երեխաներին, կայրի բնա-

կարանները, ոտքի տակ կըտայ արտերը։ Նա ոչ միայն կըկործանի Էսկալ-Էռիան, այլ նրա անունն անգամ կանհետացնէ։ Ասացէք հիմա, սիրելի ընկերներս, ինչպէս վարւինք, ինչ անենք.

—Մեռնինք, մեռնինք, աղաղակում են բոլորեքեանք, ձեռները դէպի երկինք բարձրացնելով։

—Այդ աղաղակը տարածւում է չորս կողմը ինչպէս ամպի որոտմունքը. տարածւում է արձագանգը, լեռները շարժւում են, ապառաժները գլորւում են, դողում են անտառները, իսկ գետերը, սկսած ձիւնապատ Պիրէնեան լեռներից, որընթաց հոսում են դէպի ծովը, կրկնելով՝ մեռնինք, մեռնինք, բասկեր . . ,

Իւշին-Տոմայօն բարձրանում է տեղից և ասում հռոմայեցուն։

—Օտարական, հեռացի՛ր այստեղից և ասա քո տիրոջը, թող ինքը գայ տանելու երիտասարդները, եզները, ոչխարները, խոզերը և այն բոլորը, ինչ որ նա պահանջում է։ Մենք մեր լեռներում սուրներս ձեռքներիս կը սպասենք նրան։

Բարկացած դեսպանը՝ շրթունքները կծելով՝ ասում է։

—Այո, կը գանք, թշուառականներ. և իր զինուորների հետ հեռանում է։

Դժուար է նկարագրել, թէ որքան ուրախացան բասկերը նրա գնալուն։ Միայն Իւշին- Տոմայի դէմքը մթնեց։

—Խօսիր, մի խօսք ասա մեզ, մեր մեծարգոյ երէց. մենք ցանկանում ենք քո ձայնը լսել, ասում է Բէհէն-Առակլը։

—Ոչ, զաւակներս, պատասխանում է Իւշին-Տոմայօն, չեմ կարող . . . ես խիստ յուզուած եմ։ Ուրախութիւնն ինձ խեղդում է և միևնոյն ժամանակ սիրտս տանջւում, մաշւում է

վշտից։ Ես գիտեմ, որ դուք իսկական բասկեր էք... բայց... կորաւ Էսկալ-Էռիան։ . . .

Այս խօսքերն արտասանելով՝ Ծերունին պատռտեց իր շորերը։

—Ո՜հ, մեզքացիր, խղճա մեզ, մի խօսք ասա, սովրեցրու, Ճանապարհ ցոյց տուր մեզ, պաղատում է ամբոխը։ Ինչո՞ւ այդ արտասուքը Թափւում է քու աչքերից . . .

—Ես լաց եմ լինում, որովհետև տեսնում եմ Էսկալ-Էռիայի կործանման սկիզբը. առանց դաշնակցութեան ուժ չի լինիլ։ Զարհուրելի Թշնամին մեզ սպառնում է արտաքուստ, իսկ այստեղ՝ տանը՝ մենք ունինք մի այլ ոչ պակաս ահեղ Թշնամի . . . Դեռ հեռու չէ այն ժամանակը, երբ բոլոր բասկերն ապրում էին ինչպէս հարազատ եղբայրներ, և մեր լեռներին տիրել էր խաղաղութիւնը։ Հիմա մենք Թշնամի ենք միմեանց, ինչպէս կրակն ու ջուրը։ Եւ ես, զառամեալ, համարեա մերձիմահ Ծերունիս, վերջին օրերիս պիտի ստիպւած լինիմ տեսնել իմ սիրելի հայրենիքի կործանումը . . .

—Երբէ՞ք. քանի ես դեռ ողջ եմ, այդ չըպէտք է լինի. ասաց մի բոլորովին սպիտակած Ծեր, դուրս գալով ամբոխի միջից և դիմելով դէպի Իշին-Տօմայօն։ Նրա մէջքը բոլորովին կորացած էր տարիքից, իսկ երկար սպիտակ մօրուքը հասնում էր մինչև գօտին։ Ամբողջ Էսկալ-Էռիայում նրանից Ծեր չը կար, և ոչ մէկի երեսը չէր արտայայտում այնպիսի խոր վիշտ, ինչպէս նրանը։

—Մօտեցիր ինձ, Զառա, դու խիղճ ունիս, բացագանչեց Ծերունին։ Այս խօսքերը լսելիս բոլորն էլ սաստիկ ցնցւեցին և շունչները պահած՝ սկսեցին հետևել Թէ ինչ է լինելու։

—Ողորմիր, փրկիր մեզ, Տէր, շշնջաց Իշին-Տօմայօն։

—Զառա, Զառա, մօտեցիր, բացագանչեց կրկին Ծերունին։ Ես Լեկաբիդիս՝ Լելոի հայրը՝ կամենում եմ բոլոր ժողովրդի հանդէպ խօսել քեզ հետ։

Ամբոխը շարժւեց և այնտեղից առաջ եկաւ մի ամրակազմ, երեսուն տարեկան տղամարդ, վեհ և պարթև հասակով։ Նա մօտեցաւ Ծերունուն և ձեռքերը կրծքին խաչելով, ասաց։

—Ահա ես այստեղ եմ. ինչ ես կամենում ասել.

Զառային տեսնելով՝ Լեկաբիդին դողաց ամբողջ մարմնով՝ և վայր պիտի ընկնէր, եթէ չը կրթնէր Իշին-Տօմայօյի գաւազանին, սակայն մի բոպէից յետոյ ուղղւելով, Ծերունին այսպէս խօսեց.

—Անցեալի մռայլ յիշողութիւնները մինչև եկան ոչ թէ սարսափ տարածելու մեր երկրում, այլ նրա բարիքը միայն աչքիս առաջ ունենալով։ Լսիր ինձ, Զառա։ Իմ ամենասիրելի որդի Լելոն և դու շատ սերտ բարեկամներ էիք։ Մէկ անգամ դուք Իւրբազի լեռը որսի գնացիք։ Դեռ լեռներումն էիք, երբ գիշերը պատեց. յոգնած, ցրտեցը սառած, դուք Առանց ամրոցի դուռը բախեցիք։ Ամրոցի տէրը, Բէհէն-Առակիլը, հրամայեց դուռը բաց անել, ձեզ ներս ընդունեց և թոյլ տւաւ ձեզ նրա բնակարանում անցկացնել այդ ցուրտ ձմռան գիշերը։ Խոհանոցը մտնելով, ուր այդ ժամանակ ուրախ վառւում էր վառարանը, դուք լմացաք, որ Բէհէն-Առակիլը շատ հզօր մարդ է, որովհետև շատ ծառաներ ունէր։ Այդտեղ լեռնաբնակների մէջ դուք տեսաք մի ջահել աղջիկ, որի լուսաթաթախ դէմքը լուսինն էր եշեցնում, իսկ նրբութիւնը՝ ձիւնի հատիկները. նա ձեռքին բրդի քուլան բռնած, թել էր մանում։ Դուք ձեր շորերը չորա-

ցնելու համար նստեցիք կրակի շուրջը, իսկ մատաղ աղջիկը վերցրեց ջրով լի սափորը, մոտեցաւ ձեզ և ասելով. „բարով եկաք, Թանգագին հիւրեր,“ լւաց ձեր ոտները։ Դուք մի վարկեանում երկուսդ էլ սիրահարւեցիք նրա վրայ։ Թշւառ սէր, որ այնքան ցաւերի և անբախտութեան պատճառ եղաւ։ Գեղեցկուհի Իւզօան իր սիրտը տւաւ Լեւոնին։ Նոյն րոպէից քո սիրտը լցւեց նախանձով և ատելութիւնով։ Դեռ հարսանիքի ուրախութիւնը չվերջացած, գիշերով դու մտար իմ որդու տունը և փախցրիր նրա կնոջը։ Զարհուրելի յանցանք։ Ինտան վճռեց քեզ պատժել։ Բայց դու բարեկամների և ազգականների օգնութեամբ ոտքի տակ տւիր Ինտայի բոլոր օրէնքները։ Այն օրից անասելի թշւառութիւններ սկսեցին թափւել մեր գլխին։ Քեզնից որդուս մահւան վրէժը հանելու համար, ես հաւաքեցի ծառաներիս, գնացի, կրակ տւի քո տունը, ոչնչացրի քո հօտերը, ոտնակոխ արի քո արտերը, կըտրտեցի քո անտառները և քո հենգ եղբայրներին գերի վերցնելով, կախեցի նրանց բոլորին մօրդ բնակարանի դիմաց։ Դրժոխային յանցանք, բայց քո կատարածն աւելի զարհուրելի էր։ Լսելով մեր գործերը, ամբողջ Էսկալ-Էռիա ոտքի կանգնեց։ Ալաբան, Գիպեցկօան և Բիսկայի կէսը ապստամբեցան և գէնք առած՝ քո կողմն անցան։ Իսկ Բիսկայի միւս մասը, Նաւառան և մնացած բասկերն անցան իմ կողմը։ Այն օրից ներքին ընտանեկան պատերազմը էլ չը վերջացաւ։ Անիծւիս դու, Լեւոն սպանող . . . Ո՛չ, ո՛չ, ինչ եմ ասում . . . միտքս խառնւում է...ներիր, Զառա։ Էսկալ-Էռիայի սիրուն համար մոռանանք անցած օրերի մեր թշնամութիւնը։ Գիտեմ, ես քեզ շատ չարիք եմ հասցրել։Բայց հիմա Էսկալ-Էռիայի անունով խնդրում

եմ քեզ, մոռացիր թշնամութիւնդ, ներիր ինձ։ Տուր ինձ քո ձեռքը, կամենում եմ համբուրել. և եթէ դեռ նրա վրայ մնացած կայ որդուս արիւնը, արտասուքովս կը լւանամ, կը մաքրեմ ձեռքդ։ Եւ ծնկների վրայ ընկնելով, Լեկաբիդին համբուրեց Զառայի ձեռքը։

Հրաշալի տեսարան։ Հայրը՝ հայրենիքի ազատութեան համար՝ համբուրում է իր որդու սպանողի ձեռքը։

Բոլոր ժողովին ներկայ եղողները լաց էին լինում։ Զառան ծածկել էր երեսը. նրա սիրտը սաստիկ խփում էր. կուրծքը խիստ ծանր կիրսլով բարձր ու ցածր էր անում։ Վերջապէս իրան տիրելով՝ ասաց։

—Ներեցէք, բասկեր, ես անսահման մեղաւոր եմ ձեր առաջ, իսկ դու, թշւառ հայր, վեր կաց, ես արժանի չեմ, որ դու իմ առաջ հողի մէջ թաւալւիս. թող, թող ինձ ոտքերդ համբուրեմ։

—Զառան թեքւեց և ուզում էր ընկնել և համբուրել Լեկաբիդիի ոտքերը, բայց ծերունին վեր կացաւ և ձեռքով նրան արգելելով՝ ասաց.

—Արի գիրկս, զաւակս. միանանք բոլորս Հռոմի դէմ. փրկենք հայրենիքի անկախութիւնը։

Եւ երկու թշնամիները գրկւեցին։

—Միանանք բոլորս, բոլորս միանանք, թնդում էր ամբողջ ժողովը։

Այդ ժամանակ մի ջահէլ գեղեցիկ աղջիկ երևաց ժայռի գլխին և սկսեց նւագել իր ոսկի տաւղի վրայ.—

—«Անտառներում,» այսպէս էր երգում Այտօրի դուստրը, «հաւաքւում են գայլերը։ Նրանք քաղցած են, որս են փնտռում

և շրջակայքը թնդացնում են նրանց ոռնոցով։ Արթուն կացէք, հովիւներ։ Եթէ դուք քնէք, կը ոչնչացնեն ձեր հօտերը. արթուն կացէք ու սրեցէք ձեր տապարներն ու տէգերը, որ կարողանաք կոտորել գայլերին։

—Ի՞նչ են ցանկանում այլազգիք մեր լեռներում. Նրանք կամենում են ոչնչացնել մեր պատիւն ու ազատութիւնը։ Նրանք ասում են, թէ մեր մատաղահաս աղջիկները սիրուն ու գեղեցիկ են, մեր երիտասարդները քաջ և ուժեղ են և ուզում են տանել նրանց աշխարհի խղճալի ծառայութեան համար։ Խսկալհայի ազատութեան ծառը ասում է աշխարհին. «դու չաս վախկոտ ես», և այս պատճառով ուզում են կտրել, ոչնչացնել նրան։ Դո՛ւրս, հռոմայեցիք, դո՛ւրս այստեղից։ Մենք քիչ ենք թւով, բայց մենք չենք վախենում ձեզնից, որովհետև մենք բոլորս դարձեալ եղբայրներ ենք։ Հռոմայեցոց մարմինը պատած է երկաթով, իսկ մենք մերկ ենք. բայց մենք կը բարձրանանք մեր լեռների գլուխը, կըջարդենք ժայռերը ու կըթափենք թշնամու գլխին։ Երբ թշնամին կըսկսի փախչել, մենք վեր կը գանք լեռներից, կը հալածենք նրանց մեր կարճ տէգերով։ Նայեցէք, բասկեր. կապոյտ երկնքի վրայ լուսին է փայլում և ուղարկում է դէպի երկիրը իր արծաթափայլ լոյսը։ Աղօթենք Աստծուն, որ նա ույժ տայ մեր դաշնակցութեանը ու փրկէ Խսկալ Խուխան» . . .

Բոլորն ընկան ծնկների վրայ և ճակատները կպցրին գետնին։ Նրանց աղօթքը, որ նման էր ծովի շշնջումին, հասնում էր մինչև երկինք։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека С.С.Р.А
7/XI-1922
имени А. Мясникяна

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

№		Ռ. Կ.
1.	„Աղբիւր“ 84 թ.	„ 3 —
2.	„ 87 թ.	„ 3 —
3.	„ 83 թ.	„ 10 —
4.	„ 85 թ.	„ 10 —
5.	„ 86 թ.	„ 10 —
6.	„ 88 թ.	„ 4 —
7.	„ 89 թ.	„ 3 —
8.	Փայտաշէն խրրմթից սպիտակ տոռնը. պատկերազարդ	— 60
9.	Հսկայ մըջիւն, պատ.	— 40
10.	Ժան Բատ. Լիուլիի մանկ.	— 10
11.	Ոսկէ ձկնիկ, Պուշկին	— 30
12.	„ II սերիա	— 5
13.	Մշակուած եւ անմշակ ծառի կեանքը	— 30
14.	Զար. Արամի արկած.	— 50
15.	Փրիտեօֆ դիւց. (պատկ.)	40
16.	Բնար խօսնակ . . .	— 30
17	Պօղնանի ռուսուցչի օրագ..	20
18.	Ալ. Դօդէ. Երկոտ մանրավէպ	5
19.	Անդերսեն, Սոխակ եւ խոզարած	— 15
20.	Դինկնու, Հարս եւ սկես.	— 15
21.	Ղըլըցի-Կրմ. պըմբրփեշակը	25
22.	Երեխաները եւ նրանց բարեկամները	— 40
23.	Ղ. Աղայեան, Արեգնազան	40
24,	Տոյք Անգեղ եւ Հայկանոյշ զեղեցիկ	— 40
25.	Տիգօ, Ղալի աղաթանրան	1 —
26.	Ա. Մ. Ե Պ. ճաշակ (բնտիր բանաստ.)	— 25
27.	Ն. Տ. Անէտիքեան, Տեղագրական նամականեր	— 30 կ.
28.	Օրացոյց միծադիր պատ. կերազարդ 90 թուի	— 30
39.	Փոքրադիր „ „	— 15
30.	Փ. Վարդ., Արեւելեան վիպաշխարհ	— 20
31.	Բասկական Լեգենդա	— 2

ՊԱՏԿԵՐՆԵՐ

32.	Պարոյր Հայկազն եւ Մովսէս Խորենացի . .	— 50
33.	Ս. Սահակ եւ Մեսրոպ	50
34.	Զմեռ (օշիոգրաֆիա)	— 50
35.	Մոգերի երկրպագութ.	3 —
36.	Արշաւոյս	3 —
37.	Ցիսուս խաչակիր . .	3 —

Դիմել՝ Тифлисъ "Агбюръ„

Ծախում է եւ Հայ գրավաճառանոցներում:

ԳԻՆՆ Է 2 ԿՕՊԵԿ

823

0004934

2013

ՀՅ Ազգային գրադարան

NL0004934